ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԷԱՃԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ-1»

Ք.Երևան «___» _____ 2018թ.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Բաբկեն Թադրոդյանի, որը գործում է «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8 091 080(ութ միլիոն ինսուն մեկ հազար ութսուն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	«Կոնցեռն-էներգոմաշ»ՓԲԸ
ք. Երևան, Կորյունի 2	Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10
060 621 000	Բանկ՝ «Էյչ Էս Բի ՍԻ բանկ Հայաստան»ՓԲԸ
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Հ/Հ 217002182558001
11500166513800	ՀՎՀՀ 01210095
01503448	
Արմեն Աբգարի Մուրադյան	Տնօրեն՝ Բ. Թադևոսյան
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2018.12.05 17:08:20 AMT	AVANESYAN ARPINE 7607900756
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ
	Digitally signed by AVANESYAN ARPINE 7607900756 DN: c=AM, sn=••••••••••, givenName=••••••, serialNumber=aea5c8d78d0, cn=AVANESYAN ARPINE 7607900756 Date: 2018.12.04 14:53:14 +04'00'

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2018թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի									Մատակարարում		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը եւ ապրանքային նշանը	արտադրողի անվանումը եւ ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ենթակա քանակ	ժամկետը
1	33691162/262	Միկրոկյուվետ CB300 ԷԴՏԱ Microvette CB 300 K2E N100	Sarstedt Գերմանիա	Միկրոկյուվետ CB 300 ԷԴՏԱ (CB 300 EDTA): Միկրո փորձանոթ ԷԴՏԱ հակամակարդիչի պարունակությամբ: Ֆորմատ՝ 100 միկրոկյուվետ տուփում/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում.:Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	15,000	300,000	20	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	20	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդորում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություններ ների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը:*
2	33691162/263	Միկրոկյուվետ CB300 Li-հեպարին Microvette CB 300 LH N100	Sarstedt Գերմանիա	Միկրոկյուվետ CB 300 Լի-հեպարին (CB 300 Li-Heparin): Միկրո փորձանոթ Լիթ-հեպարին հակամակարդիչի պարունակությամբ: Ֆորմատ՝ 100 միկրոկյուվետ տուփում/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In	հատ	15,000	300,000	20	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	*20*	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդորում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված*

				Vitro Diagnostic: Չօգտագործված:							*կողմերի իրավունքների և պարտականություն ների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
3	33691162 /264	ISE Ստանդ արտ ցածր ISE Standart low 10x3ML	Roche Diagnost ics Գերմա նիա	Կորաս U311 անալիզատորի համար նախատեսված ISE ստանդարտ ցածր: Ֆորմատ՝ 10x3մլ/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակ ային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	6,250	12,500	2	Հերացի 58 և/կամ Մուրաց ան 114 հասցեն երով	2	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություն ների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
4	33691162 /265	ISE Ստանդ արտ բարձր ISE Standard high 10x3ML	Roche Diagnost ics Գերմա նիա	Կորաս U311 անալիզատորի համար նախատեսված ISE ստանդարտ բարձր: Ֆորմատ՝ 10x3մլ/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակ ային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	6,250	12,500	2	Հերացի 58 և/կամ Մուրաց ան 114 հասցեն երով	*2*	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություն ների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
5	33691162 /266	ISE Ներքին ստանդ արտ ISE Int.Stan d.Gen.2,	Roche Diagnost ics Գերմա նիա	Կորաս U311 անալիզատորի համար նախատեսված ISE ներքին ստանդարտ: Ֆորմատ՝5x600մլ/հա տ: Պահպանման	հատ	62,530	250,120	4	Հերացի 58 և/կամ Մուրաց ան 114	4	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի*

		cobas c, Hitachi		պայմանները՝ սենյակ ային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:					հասցեն երով		*ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ըստ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություն ների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
6	33691162/267	ISE Ռեֆերենս էլեկտրոլիտ լուծույթ ISE Reference Electrolyte	Roche Diagnostics Գերմանիա	ԿոբասU311 անալիզատորի համար ISE Ռեֆերենս էլեկտրոլիտ լուծույթ: Ֆորմատ՝5x300մլ/հատ: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	16,490	32,980	2	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեն երով	2	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ըստ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություն ների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
7	33691162/268	C1 կալիբրատոր լուծույթ 1 (2x1750 ml), C1 Calibration solution 1	Roche Diagnostics Գերմանիա	Cobas b 121 անալիզատորի համար C1 կալիբրատոր լուծույթ 1: Ֆորմատ՝ 2x1750մլ տուփում/հատ: Պահպանման պայմանները +2C - +25C, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic Չօգտագործված:	հատ	52,830	316,980	6	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեն երով	6	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ըստ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություն ների կատարման*

											պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը
8	33691162/269	C2 կալիբրատոր լուծույթ 2 (2x1200 ml), C2 Calibration solution 2	Roche Diagnostics Գերմանիա	Cobas b 121 անալիզատորի համար C2 կալիբրատոր լուծույթ 2: Ֆորմատ՝ 2x1200մլ տուփում/հատ: Պահպանման պայմանները +2C -+25C, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:	հատ	52,830	264,150	5	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
9	33691162/270	C3 լուծույթ 3, C3 Fluid pack	Roche Diagnostics Գերմանիա	Cobas b 121 անալիզատորի համար C3 լուծույթ 3: Ֆորմատ՝ 1 հատ կոնտեյներ տուփում/հատ: Պահպանման պայմանները +2C -+25C: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic Չօգտագործված:	հատ	79,350	396,750	5	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
10	33691162/271	Ֆիբրինոգենի որոշման թեստ հավաքածու FIBRI-PREST	Stago Ֆրանսիա	Stago ընկերության Start 4 անալիզատորի համար նախատեսված ֆիբրինոգենի որոշման թեստ հավաքածու /FIBRINOGEN-	հատ	139,370	1,951,180	14	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	14	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված*

		AUTOMATE 2		PREST/: Օրիգինալ: Ֆորմատ՝ 12x2մլ/հատ, 480 թեստ, եթե թեստավորումը կատարվի Start 4 սարքի վրա օգտագործելով ընկերության կողմից տրված SOP (standart operation procedure) փաստաթուղթը: Մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոզիոմետրիկ չափման տեխնոլոգիայի: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Չօգտագործված:							*պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
11	33691162/272	Նեոպլաստին CI Պլուս թեստ հավաքածու NEOPLASTIN Cl+5	Stago Ֆրանսիա	Stago ընկերության Start 4 անալիզատորի համար նախատեսված Նեոպլաստին CI Պլուս թեստ հավաքածու /Neoplastine CI Plus/: Օրիգինալ: Մեթոդ՝ Մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոսոմետրիկ չափման հիման վրա: Ֆորմատ՝ 6x5մլ/հատ, 300 թեստ, եթե թեստավորումը կատարվի Start 4 սարքի վրա օգտագործելով ընկերության կողմից տրված SOP (standart operation procedure) փաստաթուղթը: Neoplastine CI Plus թեստը զգայուն չէ մինչև 1 IU/ml ոչ ֆրակցիոն հեպարինի և մինչև 1.5 IU/ml anti-Xa ցածրմոլեկուլային կշիռ ունեցող հեպարինի նկատմամբ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: է Չօգտագործված:	հատ	28,190	563,800	20	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	20	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
12	33691162/273	ՊՏՍՍ ժամանակի որոշման թեստ հավաք	Stago Ֆրանսիա	Stago ընկերության Start 4 անալիզատորի համար նախատեսված ՊՏՍՍ ժամանակի որոշման թեստ հավաքածու:	հատ	130,290	781,740	6	Հերացի 58 և/կամ Մուրացան 114	6	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի*

		ածու PTT AUTOMATE 5		Օրիգինալ: Մեթոդ՝ մակարդելիության ժամանակի որոշում: Ֆորմատ՝ 12x5մլ/հատ, 1200 թեստ, եթե թեստավորումը կատարվի Start 4 սարքի վրա օգտագործելով ընկերության կողմից տրված SOP (standart operation procedure) փաստաթուղթը: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Չօգտագործված:					հասցեն երով		*ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
15	33191310/6	Էլեկսիս միկրոկյուվետներ /Assay Cup/ ELECSYS 2010/cobas e 411	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար էլեկսիս միկրոկյուվետներ (Elecsys Assay cup): Մեթոդ՝Էլեկտրոխեմ իլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 60x60 միկրոկյուվետ տուփում/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic Չօգտագործված:	հատ	45,710	137,130	3	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեն երով	3	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
16	33141211/430	Էլեկսիս ծայրադիրներ /Assay Tip/ ELECSYS 2010/cobas e 411	Roche Diagnostics Շվեյցարիա	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար էլեկսիս ծայրադիրներ (Elecsys Assay tips): Մեթոդ՝Էլեկտրոխեմ իլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 30x120 ծայրադիր տուփում/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In	հատ	47,440	1,138,560	24	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեն երով	24	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված*

				Vitro Diagnostic Չօգտագործված:							*կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
17	33691162/274	Թրոմբին՝ թրոմբինի ժամանակը որոշման թեստ- հավաքածու STA THROMBIN 2	Stago Ֆրանսիա	Թրոմբին՝ թրոմբինի ժամանակը որոշման թեստ- հավաքածու նախատեսված է Stago ընկերության Start 4 լաբորատոր անալիզատորի համար: Ֆորմատ՝ 12x2մլ/հատ, բավականեցնում է մոտ 240 թեստի Start4 սարքով աշխատելու դեպքում համաձայն S.O.P.-ի (standardized operating procedures): Մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոզիմետրիկ չափման տեխնոլոգիայի: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic Չօգտագործված:	հատ	38,490	153,960	4	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	4	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
18	33191310/7	Միկրոկյուվետներ /Integra Microcuvetten/	Roche Diagnostics Շվեյցարիա	Cobas integra microcuvettes Կոբաս ինտեգրա անալիզատորի համար: Ֆորմատ՝20x1000 միկրոկյուվետ/հատ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Չօգտագործված:	հատ	208,710	417,420	2	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*

19	33691162/275	Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի 1 ստուգիչ հեղուկ PreciControl ClinChem Multi 1,20x5ml	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի1 /Cobas integra400 Precicontrol Clinchem Multi1/ ստուգիչ հեղուկ: Ֆորմատ՝20x5մլ տուփում/հատ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի ½ առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	177,340	177,340	1	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
20	33691162/276	Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի 2 ստուգիչ հեղուկ PreciControl ClinChem Multi 2,20x5ml	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի2 / Cobas integra400 Precicontrol Clinchem Multi2/ ստուգիչ հեղուկ: Ֆորմատ՝20x5մլ տուփում/հատ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	177,340	177,340	1	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*

21	33191310/8	Ռեակցիոն կյուվետներ/2 Cell Set cobas C311	Roche Diagnostics Ճապոնիա	Ռեակցիոն կյուվետներ կոբաս c311 սարքի համար: Ֆորմատ՝ 3x6 սեգմենտ/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճան, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic Չօգտագործված:	հատ	620,930	620930	1	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
22	33691166/24	Սննդամիջավայր աէրոբ և անաէրոբ միկրոօրգանիզմների անջատման համար /SCHAEDLER AGAR BASE/ 610043 Schaedler agar base	Liofilchem Իտալիա	Սննդամիջավայր աէրոբ և անաէրոբ միկրոօրգանիզմների անջատման համար: Բաղադրությունը գ/լ՝ տրիպտիկոյայի արգանակ 10,0, պեպտոհատուկ 5,0, խմորասնկային էքստրակտ 5,0, գլյուկոզ 5,0, հեմին 0, 0, L-ցիստին 0,04, ագար 13,5, վերջնական pH = 7.6 ± 0.2՝ 25 °C-ում: Ֆորմատ՝500 գր ամանոց տարաներով /հատ: CE սերտիֆիկատի առկայություն: Չօգտագործված:	հատ	35,000	35000	1	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	*1*	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
44	33691162/280	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստուգիչ ազդանյ	Roche Diagnostics Գերմանիս	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստուգիչ ազդանյութ /Cell Check/: Ֆորմատ՝ 3x40մլ տուփում (350 թեստ)/հատ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման	հատ	6040	12,080	2	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	*2*	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը*

		ութ/1 Cell Check Elecsys Kit-komlekt		պայմանները 2-8°C: Չօգտագործված:							*սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
45	33691162/281	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստուգիչ ազդանյութ/2 Blank Cell Elecsys Kit-komlekt	Roche Diagnostics Գերմանիա	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստուգիչ ազդանյութ /Blank cel/: Ֆորմատ՝ 2x50մլ տուփում/հատ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները 2-8°C: Չօգտագործված:	հատ	8310	16,620	2	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	*2*	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*
46	33691162/282	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստուգիչ ազդանյութ/3 SAP Test Elecsys cobas e	Roche Diagnostics Գերմանիա	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստուգիչ ազդանյութ /SAP/: Ֆորմատ՝ 250 թեստ հավաքածուում/հատ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները 2-8°C: Չօգտագործված:	հատ	22,000	22,000	1	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	*1*	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 15-ը*

1.Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը:

2. Սույն պայմանագրի մասով ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

3. Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը

4. Առաջին փուլի մատակարարման ժամկետը , սահմանվում է 20-22 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը:

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ
ք. Երևան, Կորյունի 2
060 621 000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝ «Էյչ Էս Բի ՍԻ բանկ Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

AVANESYAN ARPINE 7607900756

Digitally signed by AVANESYAN ARPINE 7607900756
DN: c=AM, sn=•••••••••, givenName=••••••, serialNumber=aea5c8d78d0, cn=AVANESYAN ARPINE 7607900756
Date: 2018.12.04 14:53:58 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2018.12.05 17:08:59 AMT

Հավելված N 2
« » 2018թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33691162/262	Միկրոկյուվետ CB300 ԷԴՏԱ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
2	33691162/263	Միկրոկյուվետ CB300 Li-հեպարին	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
3	33691162/264	ISE Ստանդարտ ցածր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
4	33691162/265	ISE Ստանդարտ բարձր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
5	33691162/266	ISE Ներքին ստանդարտ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
6	33691162/267	ISE Ռեֆերենս էլեկտրոլիտ լուծույթ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
7	33691162/268	C1 կալիբրատոր լուծույթ 1 (2x1750ml), C1 Calibr	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%

		ation solution 1													
8	33691162/269	C2 կալիբրատոր լուծույթ 2 (2x1200ml), C2 Calibration solution 2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
9	33691162/270	C3 լուծույթ 3, C3 Fluid pack	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
10	33691162/271	Ֆիբրինոգենի որոշման թեստ հավաքածու	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
11	33691162/272	Նեոպլաստին CI Պլուս թեստ հավաքածու	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
12	33691162/273	ՊՏՏԱ ժամանակի որոշման թեստ հավաքածու	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
15	33191310/6	Էլեկտրոնային միկրոկյուվետներ /Assay Cup/	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
16	33141211/430	Էլեկտրոնային ծայրադիրներ /Assay Tip/	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
17	33691162/274	Թրոմբին՝ թրոմբինի ժամանակը որոշման թեստ հավաքածու	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
18	33191310/7	Միկրոկյուվետներ /Integra Microcuvetten/	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%

19	33691162/275	Դրեսիկոն տրոլ Կլին Չեմ Մուլտի 1 ստու գիչ հեղուկ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
20	33691162/276	Դրեսիկոն տրոլ Կլին Չեմ Մուլտի 2 ստու գիչ հեղուկ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
21	33191310/8	Ռեակցիոն կյուվետներ /2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
22	33691166/24	Սենդամիջավայր աէրոբ և անաէրոբ միկրոօրգանիզմների անջատման համար /SCHAEDLER AGAR BASE/	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
44	33691162/280	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստու գիչ ազդանյութ /1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%
45	33691162/281	Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստու գիչ ազդանյութ /2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100	100%

46	*33691162/282*	*Elecsys 2010 իմունալոգիական վերլուծիչի համար նախատեսված ստուգիչ ազդանյութ/3*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*100*	*100%*

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով, ըստ մատակարարված քանակների:*

ԳՆՈՐԴ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
ք. Երևան, Կորյունի 2
060 621 000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝ «Էյչ Էս Բի ՍԻ բանկ Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

AVANESYAN ARPINE 7607900756

Digitally signed by AVANESYAN ARPINE 7607900756
DN: c=AM, sn=••••••••••, givenName=••••••, serialNumber=aea5c8d78d0, cn=AVANESYAN ARPINE 7607900756
Date: 2018.12.04 14:54:46 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2018.12.05 17:12:36 AMT

Հավելված N 3
« » 2018թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի (այսուհետ՝ Գնորդ) և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2018թ. _____-ին կնքված N _____պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն